

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتك** جريدة يومية سياسية وأدبية - للبرية السؤلة، إيشا آدرويشيان

1500 Լ.Ո. 74ԳԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 267 (21023) ԵՐԵՔԱՐԹԻ, 29 ՅՈՒՆԻԱՐ 2002 10 ԷՁ

ԵՆԵՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳԱՄԱՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ 100 ՄԻԼԻՈՆ ԵՌԻՐՈ  
ՊԻՏԻ ՏՐԱՄԱԳՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայաստանի եւ Վրաստանի մէջ Եւրոպական Միութեան ներկայացուցչութեան պատասխանատու Թորպէն Հոլթը «Ինթերֆաքս» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ Եւրոպական Միութիւնը 100 միլիոն եւրո պիտի տրամադրէ Հայաստանին, Հայաստանի կորիւկային ելեկտրակայանը փոխարինող այլ կառոյցներու շինութեան համար: Ան ըսաւ, որ օժանդակութիւնը կարելի է օգտագործել ջրէլեկտրակայաններ եւ կապատարներ կառուցելու, ինչպէս նաեւ ելեկտրակայանութեան բաշխիչ ցանցերը արդիականացնելու համար: Հոլթը դիտել տուաւ, որ Հայաստանի կորիւկային կայանի արդիւնաւէտութիւնը հետպետէ կը նուազի, իսկ բնապահպանական աղէտի մը հաւանականութիւնը հետպետէ կը բարձրանայ, յատկապէս նկատի ունենալով, որ Հայաստան կը գտնուի երկրաշարժի աշխուժ գօտիի մը վրայ:

## ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏԻՏՃԷԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Խորհրդարանը երէկ սկսաւ 2002 տարուան պետական պիտոճէի նախագիծի քննարկումին յատկացում իր լիազումարներուն:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի նիստը բանալի էտք երեսփոխաններէն պահանջեց մէկ վայրկեան յոտնկայս յարգել յիշատակը նախկին երեսփոխաններ Սայէմ Նուրի, Շաուրի Ֆախուրիի, Ապտալլա Ատայմիի, Ժան Ղանէմի եւ Էլի Հրապէտի:

Խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի առարկեց, որ կառավարութեան դրամական քաղաքականութեան մասին ելեւմուտքի նախարարութեան տեղեկագիրը, որ մաս կը կազմէ պիտոճէի նախագիծին, երեսփոխաններուն բաժնուեցաւ Ուրբաթ օր, մինչ նախարարաց խորհուրդը պայն վաւերացուց կիրակի օրուան նիստին:

Միեւնոյն կեցուածքը յայտարարեցին երեսփոխաններ Նիքոլա Ֆաթթուշ, Ալի Խալիլ եւ Պուրոս Հարալ:

Խորհրդարանի նախագահը վարչապետ Ռաֆիք Հարիրիէն յուսարանութիւն պահանջեց. վարչապետը ըսաւ, որ տեղեկագիրը երեսփոխաններէն առաջ բաժնուած էր նախարարներուն, եւ նախարարաց խորհուրդի նիստը պայն վաւերացնելու համար չէր, այլ անոր ընթացքին անիկա քննարկուեցաւ՝ լսելու նախարարներու նկատողութիւնները:

Պրորի պահանջեց բարեփոխել պետութեան հաշուակալութեան օրէնքը, որպէսզի տեղեկագիրին փոխանուի ըլլայ օրինական:

Ելեւմուտքի եւ պետական պիտոճէի հարցերու խորհրդարանական յանձնախումբի վեկուցաբեր երեսփոխան Ֆայէզ Ղըսն կարդաց նախագիծին մասին յանձնախումբին տեղեկագիրը:

Ան աստատեց, որ տեղեկագիրին մէջ հաւասարակշռուած բարգաւաճումի ընդհանուր պատկերացում չկայ:

Շար.ը՝ էջ 10

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԷԻ ՏԱԳԼԱՊ

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԻՋԵՒ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԿՆՅԱՅՏ ԿԸ ԴԱՌՆԱՆ



Ոստիկաններ կ'առնեն սպանուած պաղեստինցիի մատնահետքերը:

Այն պահուն, երբ Միացեալ Նահանգներ եւ Իսրայէլ թափ կու տան պաղեստինեան իշխանութեան բազան աշխարհն ու Եւրոպական Միութեան Վրաֆաթի վրայ մշտնջենքուն, արա-  
Շար.ը՝ էջ 10

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՊԻՏԻ ԶՄՆԱՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՁ

Կ'ԸՍԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Աֆղանիստանի հարաւային Գանտահար քաղաքին մէջ «Քայիտա» ցանցին 6 անդամներ սպանուած են երկ կրակոցներու եւ ձեռնառումներու պայթումին պատճառով, երբ պֆղան ուժեր եւ անոնց ամերիկացի խորհրդատուները ներխուժած են հիւանդանոց մը:

Ամերիկեան ուժերը շարունակած են Մ. Նահանգներու մէջ Սեպտեմբեր 11-ի յարձակումներուն «ուղղորդ» նկատուող Ռուսմա Պըն Լատէնի փնտրութիւնները, սակայն անոր շարժումները եւ ապաստանը տակաւին անյայտ կը մնան:

Հիւանդանոցին մէջ 7 շաբաթէ ի վեր ապաստանած «Քայիտա»ի անդամները, երկու վերջնագիրներ անտեսած են, ինչպէս նաեւ մերժած են անձնատուութեան վերաբերեալ բանակցութիւններ եւ որոշած են պայքար մղել: Անոնք մաս կը կազմէին 19 հոգիանոց խմբակի մը՝ վիրաւորներու, որոնք հիւանդանոց փոխադրուած էին Դեկտեմբեր 7-ին հակաթայեպան ուժերուն կողմէ քաղաքին գրաւումէն կարճ ժամա-



Քարգայ Ուաշինկթընի մէջ Աֆղանիստանի դեսպանատան մուտքից իր խօսքին պահուն:

նակ առաջ: Անոնց մէկ քանին խոյս տուած է, ամերիկեան ուժերը ձեր-  
Շար.ը՝ էջ 10

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՀՆՏ ՌՈՒՍԻՈՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՆ ՀԱՆԱՍԱՐԱԿՇՈՒՄԸ

Կ'ԸՍԵ ԺԻՐԻՆՈՎՍՔԻ

Ռուս քաղաքական գործիչ Վլատիմիր Փիրի-նովսի «Ապտուրիւն» ռատիոկայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին անդրադառնալով Հայտար Ալիեւի Մոսկուա այցելութեան եւ հայապրպէյճանական յարաբերութիւններուն, յայտարարած է, թէ Հայաստանի եւ Արցախի մասին իրենց տարբերակը այն է, որ յայտարարութիւնները իրենց համար թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Արցախի մասին են: «Վերջապէս պետք է հաշտեցնել այս երկու երկիրները: Սիւս արդէն մէկ դար է, որ թշնամութիւն կայ հայերու եւ թուրքերու միջեւ. վերջերս թշնամիներ զարմած են

Շար.ը՝ էջ 2

## Յ. Յ. Դ. ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ

Ընկերվար Միջազգայնականի Խաղաղութեան, Ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց յանձնախումբը, 24-25 Յունուարին, ՄԱԿի Ժընեւի կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ժողովը, նախագահութեամբ Չեխիոյ Ընկերվար-Ժողովրդավար Կուսակցութեան ղեկավար, Չեխիոյ վարչապետ Միլոս Չեմանի: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ ժողովին մասնակցեցաւ Հ. Յ. Դ. Բիրոյի անդամ, Ընկերվար Միջազգայնականի մէջ Հ. Յ. Դ. Ի ներկայացուցիչ Մարիո Նալպանտեան:

Ժողովի գլխաւոր հարցն էր «Հակամարտութեան կանխարգիլում եւ հակամարտութեան կարգաւորում» նիւթը. քննարկուեցան աշխարհի տարբեր շրջաններու մէջ առկա հակամարտութիւնները եւ պահանջ լուծելու գործընթացները:

Ժողովի երկրորդ նիւթն էր «Յանձնախումբին համար մտահոգիչ երկիրներ», քննարկուեցան տարբեր հակամարտութիւններ, ուր Ընկերվար Միջազգայնականը կրնայ կարգաւորման գծով դերակատար ըլլալ, ասոնց կարգին՝ Պիւրտուգալ, Ինտոնէսիա եւ Նեփալ:

Այս երկու օրակարգերու քննարկման ընթացքին, Մ. Նալպանտեան տարբեր առիթներով խօսք առաւ եւ անդրադարձաւ Արցախի խնդրին, ծանրանալով անոր պատճառներուն եւ լուծման ճիգերուն վրայ:

Իր օրակարգի երրորդ հարցով, ժողովը անդրադարձաւ «Հարստութիւն եւ չքաւորութիւն» նիւթին, անդրադառնալով յատկապէս այդ երկույթի ազդեցութեան՝ աշխարհի մէջ խաղաղու-

Շար.ը՝ էջ 2

ԽՕՍԵԼՈՎ ՌՈՒՄԻԱ - ԱԶՐՊԷՅՃԱՆ  
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

## ՊԻՏԻ ՓՈՐՁԵՆՔ ՄԵՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

Կ'ԸՍԵ ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ Ռուսիա կատարած իր այցելութենէն վերադառնալէ ետք, Պաքուի «Պիճա» օդակայանին մէջ լրագրողներու հետ կարճ հանդիպումի մը ընթացքին յայտարարեց, թէ Ռուսիա կատարած իր այցելութիւնը «նոր թափ հա-

Շար.ը՝ էջ 9

**ԼԻԲԱՆԱՆԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՄԱՐ ԷԼԻԱՍԻ ՄԷՁ**

Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը երէկ իր նիստը գումարեց Մար Էլիասի պաղեստինեան գաղթականային մէջ, ներկայութեամբ պաղեստինեան կազմակերպութիւններուն: Ժողովին մասնակցեցաւ նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան պատկերակրութիւնը:

Հանդիպման աւարտին ժողովը իր պատկերակրութիւնը յայտնեց պաղեստինեան ինթիֆատային եւ պաղեստինցի ժողովուրդին:

## ՖՐԱՆՍԱ – ԹՈՒՐԳԻԱ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ

Անցեալ շաբաթավերջին թուրք-ֆրանսական յարաբերութիւններուն նոր թափ տալու նպատակով Թուրքիա այցելած էր Ֆրանսայի պաշտպանութեան նախարար Ալէն Ռիշար:

Թուրքիոյ վարչապետ Պիլիէս Էճեմիթի հետ հանդիպումին ընթացքին, Ռիշար անդրադառնալով Ֆրանսայի կողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման, որուն պատճառով թուրք-ֆրանսական յարաբերութիւնները վատթարացած էին, յայտնած է, թէ հակառակ անոր որ Ֆրանսայի խորհրդարանը ընդունեց Հայկական Յեղափոխութիւնը, Ֆրանսայի կառավարութիւնը չէ որդեգրած որոշումը:

Ռիշար Էճեմիթի հետ նաեւ քննարկած է Աֆղանիստանի մէջ միջազգային խաղաղարար ուժերու ղեկավարութիւնը Թուրքիոյ յանձնելու հարցը: Այդ ուժերու ղեկավարութիւնը առայժմ կը վարէ Բրիտանիա: «Մեր կառավարութիւնը կը հաւատայ, որ Թուրքիա լրիւ պատրաստ է այս պատասխանատուութիւնը ստանձնելու համար», ըսած է Ռիշար:

Ֆրանսայի պաշտպանութեան նախարարը նաեւ հանդիպումներ ունեցած էր իր թուրք պաշտօնակիցին եւ Թուրքիոյ բանակի սպայակոյտի պետին հետ, որոնք հետ քննարկած էր թուրք-ֆրանսական յարաբերութիւնները, յատկապէս պաշտպանութեան եւ ռազմական ճարտարաբանութի ծիրէն ներս:

**ԼՈՅՍ ՏԵՍԱԲ**

**ՀԱՅՐԵՆԻ  
ԶԱՒԱԽՔ**

«Ազրպէյ» ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

● Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:

● Բովանդակութիւնը տեսնել՝ էջ 2:

**ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.**

### ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԹՅԱԲ ՊԱՍԷԼ ԱՍԱՏԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՄԱՔԻՆ

Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երեկ հաւաստեց, որ Սուրիոյ եւ Լիբանանի նախագահներ Պաշշար Ասատի եւ Կոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ կը շարունակուի երկու երկիրներու միջերիտասարդական յարաբերութիւններու ամրապնդումը:

Նախարար Յովնանեան, ընկերային հարցերու նախարար Ասատ Տիպի եւ լիբանանեան տարբեր կուսակցութիւններ ու երիտասարդական կազմակերպութիւններ ներկայացնող աւելի քան հարիւր երիտասարդներու հետ երեկ ներկայ գտնուեցաւ Պասէլ Ասատի յիշատակի ոգեկոչման յանձնախումբի Բըրտահայի մէջ կազմակերպած հաւաքին:

Նախարարներ Յովնանեան եւ Տիպի ծաղկեպսակներ վետեղեցին նաեւ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի շիրիմին վրայ:

Նախարար Յովնանեան ըսաւ, որ երիտասարդութիւնը յանձնառու է հաւատարիմ մնալու նախագահ Ասատի ազգային սկզբունքներուն եւ երկու երկիրներու կայր ամրապնդելու համար աշխատելու, հովանաւորութեամբ նախագահ Պաշշար Ասատի, որ Հաֆէզ Ասատի գաղափարներու ջախակիրն է, եւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի, որ կը հետապնդէ ազգային յոյսերու իրագործումը:

### ՆԱԽԱԳԱՇ ԼԱԿՈՒՏԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երեկ յայտնեց, որ Լիբանանի ցարդ ստացած պատասխանները ցոյց կու տան, որ արաբ ղեկավարներու մեծ մասը անձամբ ներկայ պիտի գտնուի արաբական վեհաժողովին, որ պիտի գումարուի Պէյրութի մէջ Մարտ 27ին եւ 28ին:

Ան յոյս յայտնեց, որ Պէյրութի վեհաժողովը թափ կու տայ արաբական միացեալ գործունէութիւնը ամրապնդելու երթին եւ նեցուկ կը կանգնի այն արաբական ուժերուն, որոնք կը դիմագրաւեն շրջանային եւ արաբական բեմերուն վրայ անդրադարձներ նեցող պարագայումներն ու մարտահրաւերները:

«Այս պայմաններուն մէջ գումարուող վեհաժողովը պետք է ցոյց տայ արաբական միակամութիւնը եւ որդեգրէ արաբ ժողովուրդներու իղձերուն եւ տեսլականին համապատասխան մարտաւարական գործունէութիւնը»:

Նախագահ Լահուտ նաեւ հաստատեց, որ Լիբանան պատրաստ է հիւրընկալելու վեհաժողովը, որովհետեւ ամբողջացած են լոճիսթը, վարչական, ապահովական եւ տեղեկատուական նախապատրաստութիւնները, իսկ օրակարգը ձեւաւորուած է համար հաղորդակցութիւնները կը շարունակուի Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարին հետ:

Հանրապետութեան նախագահը կը խօսէր արաբական վեհաժողովին նախապատրաստութեան աշխատանքներուն նուիրումը եւ տեսլականը:

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Նուէր Ճէվահիրճեան եւ զաւակը՝ Սաօ Տէր եւ տիկին Յովիկ Ճէվահիրճեան եւ զաւակները՝ Իշխան եւ Գէորգ

Տէր եւ տիկին Ալլաք Բիսո եւ զաւակուները

Տէր եւ տիկին Արամ Ճէվահիրճեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Ռոստոմ Ճէվահիրճեան եւ զաւակուները

Տիկին Սըրուհի Գարբինեան եւ զաւակուները

Տիկին Շաքէ Կուլիւլեան եւ զաւակուները

Տիկին Տիգրանուհի Գըրճեան եւ զաւակուները

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

### ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Պետիկ Մախուլեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Պօղոս Մախուլեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Փօլ Պասմաճեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Յարութ Փամպուլեան եւ զաւակուները

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր եւ հարազատին՝

### ԱՍԱՏՈՒՐ ՄԱԽՈՒԼԵԱՆԻ (Ծնեալ՝ Մուսա Լեռ, 1911ից)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 28 Յունուար 2002ին, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 29 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Ծաղիկ Սապա

Տէր եւ տիկին Միշո Սապա եւ զաւակուները

Տէր եւ տիկին Նաչիկ Սապա եւ զաւակուները

Տէր եւ տիկին Նաչիկ Պաքայեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Վարուժան Փանոսեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Ժորժ Զարաֆիլի եւ զաւակուները

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

### ԺՈՐԺ ՄԻՒԱՅԷԼ ՍԱՊԱՅԻ (Ծնեալ՝ Եաֆա, 1912ից)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 28 Յունուար 2002, առաւօտեան ժամը 7:30ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 29 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Այնճար, Երեքշաբթի 29, Չորեքշաբթի 30 եւ Հինգշաբթի 31 Յունուարին:

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Մատէն Գայեան եւ զստերը՝

Ջարուհի եւ Գարուին

Տէր եւ տիկին Յարութ եւ Նոնո Գայեան եւ զուստերը՝ Ժուսեան

Տիկին Սօսի Պասմաճեան

Տէր եւ տիկին Ղասսան Սրուր եւ զաւակուները

Օրդ՝ Կասիա Գայեան

Տիկին Անի Գայեան եւ զաւակուները

Ղազարեան ընտանիք

Տէր եւ տիկին Գէորգ եւ Ճէյն Մարտիրոսեան

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Սօսի Պասմաճեան

Տէր եւ տիկին Ղասսան Սրուր եւ զաւակուները

Օրդ՝ Կասիա Գայեան

Տիկին Անի Գայեան եւ զաւակուները

Ղազարեան ընտանիք

Տէր եւ տիկին Գէորգ եւ Ճէյն Մարտիրոսեան

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

### ՅԱԿՈՒՐ ԳԱՅԱԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէյրութ, 1953ից)

Մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 26 Յունուար 2002, երեկոյեան ժամը 5:00ին, իր բնակարանին մէջ, սրտի տագնապի պատճառով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 27 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Լաճուրի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը:

### ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ Կ'ԱՌԿԱՍԵՆ ԲԱՅ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ելեկտրականութեան ընկերութեան աշխատողներու եւ պաշտօնէաներու սենտիքայի գործադիր խորհուրդը երեկ ժողով մը գումարեց պետութեան անկախ հաստատութիւններու սենտիքայներու համադաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ, ապա յայտարարեց, որ իր պիտի միացնէ գործադրող կ'առկախէ երկու շաբթուան համար, ապա ելով, որ գործադրուին իր պահանջներուն ընթացք տալու համար նախարարաց խորհուրդի վերջին նիստին որոշուած քայլերը:

Գործադրուիլ անկախումով աշխատանքի վերական էլեկտրականութեան ընկերութեան նորոգութեան խմբակները, որոնք լծուեցան էլեկտրական ցանցի խանգարումներու նորոգութեան աշխատանքներուն:

### Հ. Հ. Գ. ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ... Շարունակուած Ա. ԷջԸԸ

թեան, ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց վրայ:

Յանձնախումբի ժողովին կը մասնակցեին Ընկերվար Միջազգայնականի անդամ շուրջ քսան կուսակցութիւններ, ինչպէս նաեւ Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր քարտուղար Լուիս Ալյալ եւ Ընկերվար Միջազգայնականի Կանցար Կալմակերպութեան ընդհանուր քարտուղար Մարլէն Հասա:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ... Շարունակուած Ա. ԷջԸԸ

նաեւ հայերն ու պերսները»: Ըստ Ժիրիւնովսիի, Ալլաքայեանի հետ մեքսիկոյն չ'առաջնորդէր Հայաստանի հետ Ռուսիոյ յարաբերութիւններու ստեղծման: «Հարկաւոր է հաւասարակշռութիւն», ըսած է ռուս քաղաքագետը:

### ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱՍԻՔ

Մէկ ազգ Կարանդ Փափազեան  
Ախալքալակի պայքարը Բուրճի  
Տաշիրի գաւառին բռնագրաւումը Բուրճի  
Ընդհանուր ակադի Հայաստանի հիւսիսային սահմաններ վրայ Լէօ  
Ջաւախքի պատմութիւն Աշոտ Մելքոնեան  
Ջաւախքի արեւմտահայ ազատագրական պայքարում Աշոտ Մելքոնեան  
Ախալքալակի հայ համայնքին պատմութիւնը Փրոֆ. Կ. Գ. Ղաֆազարեան  
Տանջուած ժողովուրդի մը չքնաղ հայրենիքը՝ Վ. Աւագեան  
Ջաւախք Աւագեան  
Արցախեան ազատամարտին ջաւախքի նահատակները  
Հոգեւոր - եկեղեցական կեանքը Ջաւախքում Աշոտ Մելքոնեան  
Նորօրէյի հոգեւոր կեանքը հիւսուորց Ջաւախք աշխարհում Մանասար սարկաւազ Ղուկասեան  
Ջաւախքի մշակութային կեանքը

Ջաւախքի գեղանկարչներու շաղկապուն Ալլաքեան  
Ջաւախքի աշուղները Մովսէս Միրանի  
Նշանաւոր ջաւախքիներ Արամ Բեքաբեկեան  
Ջաւախքի կրթական համակարգը Եւ. Նաւոյեան  
Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեխիթրում Վահան Մաղաթեան  
Բաց դարպաս՝ սահմանէն անդին Ծողիկ Աւրգեան

Ջաւախքի պատմական յուշարձանները Մամուլէյ Կարապետեան  
Վրաստանի քաղաքականութիւնը հայկական մշակութային կոթողներին նկատմամբ Մամուլէյ Կարապետեան  
Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Բոստամ  
Հայ - վրացական կնճիղը Արշակ Ջամայեան  
Մէքք եւ մեր հարեանները Արտաշէս Աբեղեան  
Հայ - վրացական յարաբերութիւնները Ժամանակակից փոփոխումը Սերգէյ Շաքարեան  
Վրաստանի անկախութեան պայքարը եւ հայ - վրացական յարաբերութիւններուն հետնակարը Բիւրջիս Կիրակոսեան  
Խաչիկ Տէր Ղուկասեան

Թիֆլիսի հայութիւնը Օֆելիա Գրիգորեան - Շահաբեան  
Արիւսիսի հայկական համայնքը Ջալկազուն Ալլաքեան  
Աջարական հանգոյց Մամուլէյ Էփոյեան  
Վրաց քաղաքական մտեցումները Ախալքալակ - Ախալքալակ գոտու մահմեդական բնակչութեան խնդրի առնչութեամբ Մամուլէյ Կարապետեան  
Թուստանի դաշնութեան եւ Վրաստանի միջեւ Օ. Ս. Բեկով

Չէչենական խնդիրը վրաց - ռուսական յարաբերութիւններում Մամուլէյ Էփոյեան  
Թուրքիա - Վրաստան - Ադրբեջանի փոխ յարաբերութիւններին հեռանկարի հարցի շուրջ Էդուարդ Ղազարեան  
Վրաստանի եւ ԱՄՆի յարաբերութիւնները Ս. Ա. Միխայիլով  
Վրաստանի արտաքին քաղաքականութեան կերպարանափոխութիւնները Ս. Ա. Միխայիլով  
Հայոս եւ Քարթլոս Անուշի Մրովիկ  
Ընդհանուր տեղեկութիւններ Ջաւախքի մասին

### ԻԾՐԱՆ ԾԵՎԱԶԻՐՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէյրութ, 1937ից)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 28 Յունուար 2002, առաւօտեան ժամը 9:30ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 28 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Լաճուրի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Երեքշաբթի 29, Չորեքշաբթի 30 եւ Հինգշաբթի 31 Յունուարին:

### ՄԱՀԱԶԳ

Տիկին Լուսին Դաւիթեան

Տէր եւ տիկին Սերոբ Դաւիթեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Գրիգոր Դաւիթեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Ղեւոնդ Յովսէփեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Անդրանիկ Գարայեան եւ զաւակուները

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

### ՆՇԱՆ ԴԱԻԹԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ 23 Յունուար 2002ին, Միացեալ Նահանգներ, Լոս Անճելըս:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երեքշաբթի, 26 Յունուար 2002ին, Լոս Անճելըս:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին գաւակին՝ Սերոբ Դաւիթեանի բնակարանը, Հանքաշ, «Պիլլոս» շէնք, Ա. յարկ, Երկուշաբթի 28 եւ Երեքշաբթի 29 Յունուարին:

### ՄԱՀԱԶԳ

Տէր եւ տիկին Վաչէ Տիգրեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին տղթ. Արմենակ Եղիայեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին տղթ. Իշխան Եղիայեան

Տիկին Վերթին Միթիլեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Յակոբ Թորիկեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Տիրան Փալանճեան եւ զաւակուները

Տէր եւ տիկին Սուրէն Փալանճեան եւ զաւակուները

Տիկին Յասմիկ Տիգրեան եւ զաւակուները

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

### ԷՕԺԷ ՏԻԶԻՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՓԱՍԼԱՃԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 26 Յունուար 2002ին, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 27 Յունուար, Ժուսիկի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ եւ ամփոփուեցաւ Ժուսիկի Ազգային գերեզմանատան ընտանեկան դամբարանին մէջ:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

● Յուսակցութիւնները կ'ընդունուին տղթ. Արմենակ Եղիայեանի բնակարանը, Մզհեր, «Բիրիթեան» շէնք, 4րդ յարկ, Երեքշաբթի 29 եւ Չորեքշաբթի 30 Յունուարին:

● Կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Ազգային Մերանցիցի:

### ԲԱՆՏԱՒՈՐԱԲԵԱԾ

Տէր եւ տիկին Գրիգոր եւ Անի Աւագեան բախտաւորուած են արջինեկ աղջիկ պատկով մը՝

ԿԱԼԻ

28 Յունուար 2002

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Էլիկ Ուրիշեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Մարտիրոս Պուլեան՝ 20 տոնլար՝ Մելանքոն եւ Հայկ Արայանեան ձեռնարանի ծնողական խորհուրդին:

### ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Ազգային Եղիշե Մանուկեան քոլէճի «Սօսի Ուրֆայեան գեղարուեստական ֆոնդին» տէր եւ տիկին Կարոյեան եւ Վարդուկ Կարապետեան եւ պատկով՝ 100 տոնլար, Սեւան Ուրֆայեան եւ պատկով՝ 100 տոնլար:

### ՇՆՈՐԿԱԿԱԼԻԵ

● Տիկին Ջուրթ Գարայեան, տէր եւ տիկին Գեորգ Գարայեան, Միսաք Պաստաճեան, Սարգիս Սարեան, Գեորգ Ալիախոյեան եւ Երայր Ալիախոյեան իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ, հեռաձայնով, մասնակից եղան իրենց ամուսնոյն, եղբոր, տղարջ, անբողոք եւ բեռնադիմ ՍՏՓԱՆ ԳԱՐՍՊՅԱԾԵԱՆԻ մահուան սուգին:

# ՀՆԴԿԱՍՏԱՆ – ՓԱՔԻՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

Հնդկաստան – Փաքիստան սահմանին վրայ երկու փաթիստանացիներ սպանությունեցան եւ ութ ուրիշներ վիրավորուեցան հնդիկ ուժերուն հետ բախումի մը ընթացքին: Ոստիկանութեան բանքեր մը ըսաւ, որ երկու փաթիստանացիները սպանուեցան, որովհետեւ անոնք մեղսակցած էին Կալկաթայի ամերիկեան կեդրոնին դէմ գործուած յարձակումին: Բանքերը աւելցուց, որ մեռնելէ առաջ, փաթիստանացիներէն մէկը խոստովանեցաւ, որ կապ ունեցած են գործողութեան հետ, որուն ընթացքին սպանուած էին չորս ոստիկաններ: Բանքերը ըսաւ նաեւ, որ անոնք անդամ էին Քաշմիրի անջատողական արգիլուած շարժումի մը, որուն ղեկավարութիւնը Փաքիստան ակաւտանած է ու հոնկէ կը գործէ:

Փաքիստանցի պաշտօնատարները իրենց կարգին յայտնեցին, որ ութ քաղաքայիններ վիրավորուեցան սահմանամերձ շրջանի մը մէջ: Պաշտօնատարները ըսին, որ հնդիկ զինուորներ փամփոշուեցուցան տարփի մը տակ առած են քաղաքայիններ: Մտնոք աւելցուցին, որ հնդիկ ուժերը առանց պատճառի սկսած են կրակել՝ բախում մը իրահրելու համար: Միւս կողմէ, Փաքիստանի կառավարութիւնը յայտնեց, որ ապատ պիտի արձակէ երկրին իսլամական մեծագոյն կուսակցութեան ղեկավարը՝ Վայն երեք ամիս կալանաւորուած պահելէ ետք: Գերագոյն ատենի աղբիւր մը յայտնեց, որ Ղապի Հիւսէյն ղեկավարութիւնը Փաքիստան ակաւտանած է ու հոնկէ կը գործէ:

ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինաստանի փոխ վարչապետ Քիան Քիչէն իր իրաքցի պաշտօնակիցին՝ Թարէք Ալիյի փոխանցեց, որ Պէյճիկի վարչապետ Նուրի Ալ Նուրիի հետ զրոյցներ ղեկավարած ըլլալուն համար: ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինաստանի փոխ վարչապետ Քիան Քիչէն իր իրաքցի պաշտօնակիցին՝ Թարէք Ալիյի փոխանցեց, որ Պէյճիկի վարչապետ Նուրի Ալ Նուրիի հետ զրոյցներ ղեկավարած ըլլալուն համար: ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինաստանի փոխ վարչապետ Քիան Քիչէն իր իրաքցի պաշտօնակիցին՝ Թարէք Ալիյի փոխանցեց, որ Պէյճիկի վարչապետ Նուրի Ալ Նուրիի հետ զրոյցներ ղեկավարած ըլլալուն համար:

ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Եւրոպական Յանձնաժողովը թուրք կիպրացիներու պիտի ներկայացնէ Հիւսիսային Իրլանտայի ռոնով օժանդակութեանց հաւանակարտութիւնը, եթէ անոնք խաղաղութեան համաձայնութեան մը յանգին՝ Ե. Միութեան ծիրէն ներս Կիպրոս վերամիացնելու, ըսած է Ե. Միութեան բարձրատիրձան մէկ պաշտօնատարը Երկուշաբթի օրը: Ե. Միութեան գործադիր մարմինը Չոնքէքէքի օր առաջարկներ պիտի ներկայացնէ՝ 2004էն սկսեալ 15 անգամ հաշուող պլոքին անդամ դառնալիք նոր 10 անդամներու համարկումը ֆինանսաւորելու համար: Նոր անդամներուն շարքին պիտի ըլլայ Կիպրոս: Ներկայիս Նիկոսիոյ յոյն կիպրական կառավարութիւնը միայն, որ միջազգային ճանաչում կը վայելէ, Ե. Միութեան անդամակցութեան նպատակով բանակցութիւններ կը վարէ: Թուրքիա եւ Հիւսիսային Կիպրոսի թրքական բաժինը բանակցութիւնները ապօրինի որակած են: Այսուհանդերձ, Ե. Միութեան օրէնքներուն համաձայն, յոյն կիպրացիք շրջանային ամէնէն շահաւոր օժանդակութիւնը չեն կրնար ստանալ, որովհետեւ անհատներու եկամուտը Ե. Միութեան միջին եկամուտէն 75 առ հարիւր աւելի բարձր է: Միջադէմ, թուրք կիպրացիներուն պարագային եկամուտը 75 առ հարիւրէն շատ աւելի նուազ է, որովհետեւ շրջանը միջազգային տնտեսական «պոյք»-ի ենթակայ է, հետեւաբար Կիպրոսի անդամակցութեան պարագային մեծ համեմատութեամբ շահաւոր պիտի ըլլայ:

# ՊԵՅՅԻՆԿ ԸԱՍԱԶԱՅՆ ՉԷ ԱՇԽԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱԻԱԼՍԱՆ

Պուշ Իրաքի ղեկավար Սատտամ Հիւսէյնը պարզացուցած է ՄԱԿի հետ չգործակցելու հետեւանքներէն, թէեւ ան չէ բաց, որ պիտի յարձակի Իրաքի վրայ: Պուշ կը պահանջէ, որ Սատտամ վերադարձի արտօնութիւն տայ ՄԱԿի քննիչներուն, որոնք Պաղատեսն հետացած են Դեկտեմբեր 1998ին: Ուաշինկթըն կ'ըսէ, որ քննիչները պետք է վերադարձնան ստուգելու համար, որ Իրաք հաւաքական քանդումի պէտքեր չունի: Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա դիտել կու տան, որ անցնող երեք տարիներուն Իրաք ՄԱԿի քննիչներուն հսկողութեան դուրս մնացած է եւ օգտուելով անոնց բացակայութենէն, հաւանաբար թափ տուած է քիմիական ու կենսաբանական պէնքերու պատրաստութեան նոր ծրագիրներու: Հետեւաբար, քննիչները պետք է վերադարձնան ստուգելու համար կացութիւնը:

Ալիյ, որ Կիրակի օր Չինաստան ժամանած էր, աւարտելէ ետք Ռուսիա այցելութիւնը, յոյս յայտնեց, որ Պէյճիկի աւելի գործօն դերակատարութիւն ունենայ Իրաքի տագնապը արդար լուծուելով մը աւարտելու ճիգերուն մէջ: Չինաստանի վարչապետ Ժու Ռոնկի իր կարգին Ալիյի յայտնեց, որ Պէյճիկի պատրաստ է շարունակելու իր ճիգերը՝ լուծելու համար դժուարութիւնները, որոնք Օնցի պատերազմէն վեր տագնապի մտնած են Իրաքը: «Կիւնիստ»-ի համաձայն, Սա ըսած է, որ Իրաքի հանդէպ հաստատուած պատժամիջոցներու հարցը պետք է շուտով արդար լուծուի մը ստանալ: Ժու վերահաստատած է նաեւ, որ Չինաստան կը պահանջէ յարգել Իրաքի գերիշխանութիւնն ու սահմանները: Չին վարչապետը յոյս յայտնած է նաեւ, որ Իրաք բարելաւէ իր կապերը ՄԱԿի եւ դրացի երկրներու հետ՝ ստեղծելու համար պատժամիջոցները ջնջելու յարմար մթնոլորտը: «Կիւնիստ» լաւելեալ մանրամասնութիւններ չհաղորդեց Ալիյի այցելութեան մասին: Մանրամասնութիւններ չփոխանցեց նաեւ Չինաստանի մէջ իրաքեան դեսպանատունը: Ռուսական «Իթար-Թասս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ աւարտելէ ետք Չինաստան այցելութիւնը, Ալիյ լաւելեալ բանակցութիւններու համար Մոսկուա պիտի վերադառնայ: Գործակալութիւնը աւելցուց, որ Ալիյ պիտի վերադառնայ, որովհետեւ ռուսեամերիկեան նոր խորհրդակցութիւններ պիտի կատարուին Իրաքի պատժամիջոցներուն մասին Փետրուար 6ին, Ժընեւի մէջ: Միւս կողմէ, Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Մապրի երէկ հաստատեց, որ Իրան պիտի վերսկսի դէպի Պաղատես ուղղակի թռիչքներուն՝ քսան տարուան առկախումէ մը ետք:

Սապրի կը խօսէր Թեհրանի մէջ, ուր ժամանած էր պաշտօնական հապուադէպ այցելութեան մը համար: Սապրի չըսաւ սակայն, թէ թռիչքները ե՞րբ պիտի վերսկսին: Յստակ չէ նաեւ, եթէ Իրան տեղեակ պահած է ՄԱԿի պատժամիջոցներու յանձնարարութիւնը, որ պետք է կանաչ լոյս տայ այսպիսի ծրագիրներու:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՄԱՐԶԻ ՕՐԷՆՔ ՄԸ ՍԵՋԷՐԻ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻ

ԱՆԳԱՐԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Կառավարական ընկերակցութիւնը Երկուշաբթի օր յայտնած է, լէ վեթոյի ենթարկուած դրամատուներու վերաբերեալ օրէնք մը անփոփոխ կերպով նախագահին պիտի վերադարձնէ, անոր պարտադրելով, որ վայն կնքէ, մինչ կը պայքարի Դրամական Միջազգային Ֆոնտին ճշգրտ ժամկետը յարգել՝ շուրջ 12 միլիարտ տոլար վարկ ապահովելու համար:

Շահարկողներ մտահոգ կերպով կը սպասէին կառավարական ընկերակցութեան ղեկավարներէն յայտարարութիւն մը, տնտեսութեան նախարար Քեմալ Տերփիշի այն խոստումէն ետք, թէ կառավարութիւնը պիտի ընէ ինչ որ անհրաժեշտ է վաւերացնել տալու համար օրէնքը, որուն նպատակը ամրապնդել է դրամատուային դրութիւն մը, որ երկու տագնապներ պատճառած է:

Կառավարական ընկերակցութեան ղեկավարներուն միջեւ արտակարգ ժողովէ մը ետք, փոխ վարչապետ Մետրք Երլմազ թղթակիցներու յայտնած է, թէ կ'առաջարկուի օրինագիծը անփոփոխ կերպով նախագահին դրկել: Նախագահ Ահմէթ Նեճմետ Սեյփեր Ուրբաթ օր դրամատուային բարեկարգումներու օրէնքին մէջ երեք յօդուածներ մերժած է:

Ան պետք է վաւերացնէ օրէնքը, եթէ խորհրդարանը վայն անփոփոխ վերադարձնէ իրեն, թէեւ ան կրնայ աւելի ուշ վայն սահմանադրական ատենանին յղել:

Երլմազ յոյս յայտնած է, որ խորհրդարանը օրինագիծը մինչեւ Հինգշաբթի օր պիտի վերադարձնէ նախագահին: Դ. Մ. Ֆոնտը, որ օրէնքը կենսական կը նկատէ, Փետրուար չորրորդ ժամկետ ճշգրտ է՝ քննարկելու եւ որոշելու համար Թուրքիոյ 12 միլիարտ տոլարի հասնող վարկերու յատկացումին հարցը:

## ԵԳԻՊՏՈՍ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

Եգիպտոսի պետական ակադեմիայի ատենան մը արգելափակուած կը պահէ ութ իսլամականներ, որոնք ենթադրաբար անդամներ են Իսլամ Եղբայրներ արգիլուած կուսակցութեան, յայտնեցին ակադեմիայի ատենան աղբիւրները: 2 երբակալուածները, որոնց կարգին են բժիշկներ եւ համալսարանի դասախօսներ, կ'ամբաստանուին արգիլուած կազմակերպութիւն մը վերականգնելու եւ ղեկավարելու յանցանքով: Մտնոք կ'ամբաստանուին նաեւ ուսանողական բողոքի շարժումներ իրահրելու յանցանքով: Ամբաստանեալները ձերբակալուած էին Ուրբաթ օր: Ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ ձերբակալուածները կալանքի տակ պիտի մնան մինչեւ հարցաքննութիւններու ու հետաքննութիւններու աւարտը:

(ՌՈՅԹԸՐԸ)

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ**

Սոյն ձեռնարկին հետեւեալ միութիւնը կը ստանձնէ օրուան մը ձաշի ծախսը՝ 300 տոլար:

Ս. Խաչ եկեղեցւոյ Բարեսեր Տիկնանց Միութիւն՝ 29 Յունուար:

## ԵՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ

### ՌՈՒՐՔ ԿԻՊՐԱՅԻՆԵՐՈՒՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

ՊՐԻԻԲՍԷԼ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Եւրոպական Յանձնաժողովը թուրք կիպրացիներու պիտի ներկայացնէ Հիւսիսային Իրլանտայի ռոնով օժանդակութեանց հաւանակարտութիւնը, եթէ անոնք խաղաղութեան համաձայնութեան մը յանգին՝ Ե. Միութեան ծիրէն ներս Կիպրոս վերամիացնելու, ըսած է Ե. Միութեան բարձրատիրձան մէկ պաշտօնատարը Երկուշաբթի օրը: Ե. Միութեան գործադիր մարմինը Չոնքէքէքի օր առաջարկներ պիտի ներկայացնէ՝ 2004էն սկսեալ 15 անգամ հաշուող պլոքին անդամ դառնալիք նոր 10 անդամներու համարկումը ֆինանսաւորելու համար: Նոր անդամներուն շարքին պիտի ըլլայ Կիպրոս: Ներկայիս Նիկոսիոյ յոյն կիպրական կառավարութիւնը միայն, որ միջազգային ճանաչում կը վայելէ, Ե. Միութեան անդամակցութեան նպատակով բանակցութիւններ կը վարէ: Թուրքիա եւ Հիւսիսային Կիպրոսի թրքական բաժինը բանակցութիւնները ապօրինի որակած են: Այսուհանդերձ, Ե. Միութեան օրէնքներուն համաձայն, յոյն կիպրացիք շրջանային ամէնէն շահաւոր օժանդակութիւնը չեն կրնար ստանալ, որովհետեւ անհատներու եկամուտը Ե. Միութեան միջին եկամուտէն 75 առ հարիւր աւելի բարձր է: Միջադէմ, թուրք կիպրացիներուն պարագային եկամուտը 75 առ հարիւրէն շատ աւելի նուազ է, որովհետեւ շրջանը միջազգային տնտեսական «պոյք»-ի ենթակայ է, հետեւաբար Կիպրոսի անդամակցութեան պարագային մեծ համեմատութեամբ շահաւոր պիտի ըլլայ:

ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինաստանի փոխ վարչապետ Քիան Քիչէն իր իրաքցի պաշտօնակիցին՝ Թարէք Ալիյի փոխանցեց, որ Պէյճիկի վարչապետ Նուրի Ալ Նուրիի հետ զրոյցներ ղեկավարած ըլլալուն համար: ՊԵՅՅԻՆԿ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Զինաստանի փոխ վարչապետ Քիան Քիչէն իր իրաքցի պաշտօնակիցին՝ Թարէք Ալիյի փոխանցեց, որ Պէյճիկի վարչապետ Նուրի Ալ Նուրիի հետ զրոյցներ ղեկավարած ըլլալուն համար:

## ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՄԷՋ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ԱՍԹԱՆԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ղապիստանի վարչապետ Քախիմովարթ Թոքաե Երկուշաբթի օրը հրաժարեցաւ իր պաշտօնէն: Նախագահ Նուրուլլահան Նապրապաե անմիջապէս նշանակեց Իմանկալի Թամակամպետովը վարչապետի պաշտօնին համար: Նապրապաե յայտնեց, որ Թամակամպետով ատակ է ստանձնելու վարչապետի պաշտօնը: Ղապիստանի օրէնքներուն համաձայն, երբ վարչապետը հրաժարի, կառավարութեան բոլոր անդամները կը ստիպուին նոյն քայլին դիմել: Թոքաե նախապէս փորձած էր հրաժարիլ, սակայն անոր հրաժարականը մերժուած էր Նապրապաեի կողմէ: Հրաժարականին միակ պատճառը փոխանցուած էր պաշտօնական բացատրութեամբ մը, որ կ'ըսէր, թէ ժամանակը հասած է նոր ժողովուրդի մը ծնունդին, նոր գաղափարներով եւ մտնեցումներով:

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● **ՀԱՆՈՅ.** Հարաւային Վիեթնամի մէջ ատենան մը վիեթնամցի մը ինը տարուան բանտարկութեան դատապարտեց, որովհետեւ ան պատճառած էր իր աներոջ մահը... անոր ականջը խածնելով:

52 տարեկան զոհը յայտնապէս մահացած էր սրտի տագնապի պատճառով, երբ բարկացած փեսան խածած էր անոր ականջը եւ փրցուցած է կտոր մը: Սները կը փորձէր միջամտել, փեսային ու աղջկան միջեւ ծագած վիճարանութեան վերջ տալու համար:

● **ՊԵՅՅԻՆԿ.** Չինաստանի հիւսիսային շրջանին մէջ հանքավայրին մէջ առնուապ 27 Շարք՝ Էջ 10

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ ԸՆԿ. ԵՒ ՏԻԿ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՏԻԿ. ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՃԱՇԻ ՊԱԶԱՐ**

Ի ՆՊԱՍՏ ԿԱՐԻՔԱՒՈՐ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ

Հովանաւորութեամբ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՄ. ԽԱԶԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Նախագահութեամբ՝ ՏԻԿԻՆ ԱՆԱՇԻՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 2 Փետրուար 2002, առաւօտեան ժամը 11:00ին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի սրահին մէջ, Պուրճ Համուտ:

## ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը



2եր ինքնաշարժից պենզին, մագնիս, իւղից, ինչպէս նաեւ լուալու համար, կծարունից հետ միաժամանակ մերկայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

- FUEL CARDԸ ԿՐԱՄԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԵՏԵԼԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ**
- CORAL JAL EL DIB, ժել էլ Տիպ
  - HYPKO ANTELAS, Հարաք Ալ Ղաուարն
  - SPEED ANTELAS, Կարողիկոսարանի դիմաց
  - CORAL BAABDAT, Պապատք մայրուղի
  - SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
  - HYPKO HAMRA, Պանք Տի Լիպանցն առաջ
  - MEDCO KARANTINA, Զարանքիցի մայրուղի
  - CORAL BHAMDOUN, Ղաւանքի մայրուղի
  - CORAL MAR MIKHAEL, Մար Միխայել, Սատտ պողոտայ
  - SPEED ALITTIHAD, Կալեի Իթիհատ
  - MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկից կից
  - CALTEX ANJAR, Այնճար
  - BASSIL DORA, Տորայի կամուրջ
  - ԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Այնճար»-ի կից
  - ԱՍՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սից էլ Տիկի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔԱՐՇ ԿԸ ՍՍԱՆԱԸ ԶՐԻՕՐԷՆ

ԱՐԺԷՔՒՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

# «ՏԱԻԻՏՈՑ» ԿԸ ԾՐԱԳՐԻ «ՍԻԿԱՐՈՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ ԴԻՄ ԱՐԳԵԼՔ ՀԱՍՏԱՏԵԼ

«Արմինֆո» լրատու գործակալությունը կը յայտնէ, թէ գույքերիական ծխախոտի «Տալիտոֆ» ընկերությունը դատ րացած է Հայկական «Սիկարոն» ընկերությունից դեմ, որովհետեւ այս վերջինին արտադրած ծխախոտներուն ծրարներուն ձևը շատ կը նմանի «Տալիտոֆ» ծրարներուն ձևին:

Ըստ «Սիկարոն» ընկերության, «Տալիտոֆ» ընկերության իսկական նպատակն է Պենելիքսի (Պել-ճիքա, Հոյանտա, Լիբրամպուրի) եւ հետագային Եւրոպական Միության երկիրներուն մէջ արդիւն «Սիկարոն» վաճառանիչի ծխախոտներուն վաճառքը: Նշենք, որ «Սիկարոն» արտադրություններուն 75 առ հարիւր կը վաճառուի Հայաստանէն դուրս: 2001ի ընթացքին ընկերությունից արտադրություններուն վաճառքը աւելցած է 30 առ հարիւրով:

«Սիկարոն» ընկերությունից տնօրէն Կարէն Աղոնց մամուլը ասուելիս մը ընթացքին յայտնած է, որ ծխախոտի ծրարներուն ձևին մասին «Տալիտոֆ» ընկերությունից կողմէ կատարուած մեղադրանքները անհիմն են, քանի որ բազմաթիւ ընկերություններ կ'արտադրեն ութանիստ տուփերով ծխախոտներ: Ինչ կը վերաբերի տուփին գոյնին եւ տառատեսակին, «Տալիտոֆ» կ'արտադրուի վեց գոյնով, իսկ ոչ մէկ ընկերություն իրաւունք ունի սեփականացնել տառատեսակ մը: Կ. Աղոնց ըսած է, որ գնողները թիւրիմացութեան մէջ չեն գտնուիր, քանի որ մէկ տուփ «Սիկարոն» կ'արժէ 5,40 եւրո, իսկ «Տալիտոֆ»՝ 3,15 եւրո: Ան շեշտած է այն տեսակէտը, որ այս մեղադրանքներուն ետին կանգնած է «Սիկարոն» Պենելիքսի երկիրներէն եւ ընդհանրապէս միջազգային շուկաներէն դուրս մղելու ցանկութիւնը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ԹԻՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԻԱՅԷՆ ԵՏՔ ԵՐԿՐՈՐԳ՝ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի Տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան յանձնարարները նախագահ Սամուէլ Ստեփանեանի համաձայն, վերջին շրջանին կատարուած ուսումնասիրություններուն ընթացքին պարզուած է, որ վերջին երեք տարիներուն Հայաստանի մէջ համացանցին օգտուողներուն թիւը չորս հազարէն հասած է 30 հազարի:

Ասոր իրեն արդիւնք՝ Հայաստանը համացանցին օգտուողներու թիւով (3,5 միլիոն բնակիչի հաշուարկով) նախկին Խորհրդային Միության տարածքին կը դրաւէ երկրորդ գիրքը՝ Ռուսիայէն ետք:

## ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԱՅՅԵԼԱԾ Է 130 ՀԱՉԱՐ ՀՈԳԻ

Հայաստանի մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարարութիւնը իրագործած է անցեալ տարուան համար նախատեսուած ծրագրի իրականացումը, իսկ պետութիւնը ֆինանսաւորած է ծախսերուն 97,1 առ հարիւրը:

23 Յունուարին նախարար Ռոյանտ Շառոյեան անցեալ տարուան հաշուետուութեան արդիւնքները ներկայացուցած է Հայաստանի վարչապետին: Ան լրագրողներուն տեղեկացուցած է, թէ այս տարուան ընթացքին նախատեսուած է ընդլայնել գեղարուեստական երկար ժապաւեններու արտադրությունը՝ ուրիշ երկիրներու հետ գործակցութեամբ: Ասոնց կարգին տեղ պիտի գտնեն Գուսան Ջիւանիի եւ արցախեան ազատամարտին մասին պատմող գեղարուեստական ժապաւենները:

Ռ. Շառոյեան տեղեկացուցած է, թէ Հայաստանի թանգարանները անցեալ տարուան ընթացքին ունեցած են 130 հազար այցելու: Ան նշած է, թէ արտասահմանցիներու հետաքրքրությունը մեծ է Հայկական մշակութային արժէքներուն նկատմամբ: այս առումը չուրեմ յստակ վկայութիւններ են Հոյանտայի Լէյտին եւ Ութերիսթ քաղաքներուն մէջ կազմակերպուած ցուցահանդէսները:

Պատասխանելով այն հարցումին, թէ նախարարութիւնը արդեօք պիտի պահպանէ՞ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի անցեալ տարուան աշխատանքներուն թափը, նախարարը շեշտեց, որ անոնք զիստադրաբար պիտի ունենան նոյն ծաւալը, բացի՝ շատ մեծ ձեռնարկներէն եւ ներկայացուցանքներու կազմակերպումէն:

**Ա Յ Ի Լ**  
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ  
ԱՊԱՇՏՈՒԿԱԳՐՈՒԹԻՒՆ

**85\$**

●SOS FREE OF CHARGE  
ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՓՈՆԱԳՐՈՒԹԱՆ  
ԱՊԱՇՏՈՒԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՐԻ

ՀԱՍՅԷ. ԱՅԷՏԻ ՃԵՆԸ Բ. ՅԱՐԿ  
ԵՌ. 01-242556 եւ 01-242557

# ԼՈՒԻ ԴԱՍՏԻՆԱԿԱՅԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ ՀԱՐՑԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Լիրանանի քաղաքացիին եւ մասնաւորաբար լիրանանահայ կինը կենսոլորտային հարցերու մասին աւելի իրազեկ դարձնելու նպատակով, ԼՈՒԻ Երջանային վարչութեան դաստիարակչական յանձնարարութեամբ կազմակերպուած էր կենսոլորտային հարցեր արծարծող դաստիարակչական ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 23 Յունուարի առաւօտեան ժամը 10:30ին, ԼՈՒԻ «Ա. Պուլիտեր» ընկերարժեքային կեդրոնին «Թնճուկեան» սրահին մէջ: Օրուան դասախօսանքի Կարօ Յարութիւնեան, որ Լիրանանի կենսոլորտի նախարարութեան եւ ՄԱԿի համագործակցութեամբ կատարուող «Մեքի» Պրո-

քանչիւր տասը դար անգամ մը, իսկ այժմ՝ իւրաքանչիւր քառորդ դար անգամ մը:

Կ. Յարութիւնեան շեշտեց, որ կենսոլորտի հարցերուն մէջ կարեւոր տեղ կը զբաւէ աղբերու հարցը, որ դարձած է աշխարհի զիստաւոր տագնապը: Ան ըսաւ, որ Լիրանանի մէջ իւրաքանչիւր անձ օրական միջին հաշուով կ'արտադրէ մէկ քիլօ աղբ: Աղբերը կը բաժնուին տեսակներու: Կան տնային, հիւանդանոցային, գործարարային եւ թունաւոր աղբերը, որոնցմէ իւրաքանչիւրը տարբեր տարողութեամբ կը փնտէր կենսոլորտին: Այս աղբերը կը չէզոքանան երկու ձեւով. ա) ալրել, որ կ'ապական է օդը, բ) հողին մէջ թաղել, որ իր կարգին կ'ապական է հողը եւ ջուրը»: Դասախօսը Լիրանանի կենսոլորտի նախարարութեան պատանոցող յարգը փոսնողը նկատեց հեղուկ աղբերը, որոնք կը բաղկանան երկրագործական եւ միջտնային



Նոյնի Ազնաւորեան կը ներկայացնէ բացման խօսքը:



Կարօ Յարութիւնեան դասախօսութեան պահուն

մայր Ալլըքնիքի» ծրագրին տնօրէնն է:

Բացման խօսքը կատարեց Նոյնի Ազնաւորեան, որ հակիրճ կերպով ներկայացուց 2001-2002 տարեշրջանի սկզբնական շրջանին դաստիարակչական յանձնարարութեան կատարած աշխատանքները: Ան ըսաւ, որ վերջին դարու ընթացքին թափ օտարացած գիւտերը, մարդուն կենսաբանականներով հանդերձ, կ'ապականեն կենսոլորտը, եւ նշեց այդ ապականումին հետեւանքները:

Այս խօսք տուաւ Կ. Յարութիւնեան եւ դասախօսութեան առաջին մասով ներկայացուց ընկերութեան եւ կենսոլորտի սպառնացող հարցերը: Ան ըսաւ, որ աշխարհը կը գոյատեւէ զինք կը պահպանուի արբերուն միջեւ, որոնց շարքին՝ նաեւ մարդը, գոյութիւն ունեցող հաւասարակշռութեամբ, որուն խախտումը կրնայ լրջորէն փոխանցել բոլորին գոյութիւնը: «Մարդ արարաւ ի խելացի ըլլալով հանդերձ, գլխաւորաբար ինք պատասխանատու է աշխարհին պահպանման եւ քանդումին», ըսաւ ան: Դասախօսը բացատրեց, որ ճարտարապետական յեղափոխութեանն ետք յայտնուած գործարաններով, ինքնաշարժներով եւ այլնայն տարաբնույթի ընկերություններով մտահոգիչ աստիճաններու հասած է մարդուն կողմէ կենսոլորտի փոխանցումը: Այս երեւոյթի պատճառն կերպին է, նկատել նաեւ մարդկութեան թիւին աննախընթաց աճը: Նախապէս մարդկութեան թիւը կը բազմապատկուէր իւրա-

քանչիւր եւ զանոնք փոխարինել նոր պատրաստուած եւ օգոնի խաւին փնտսող հարցաւորութիւններով: Ան նաեւ կարեւոր նկատեց պահպանել բոլոր անտառները եւ կանաչապատ տարածութիւնները, եւ գոլորտային ընկերութեան փնտրողներուն, բոյսերուն, խնայել անտառի անասունները, որովհետեւ անոնք բոլորն ալ իրենց գերակատարութիւնը ունին աշխարհի եւ կենսոլորտի հաւասարակշռութեան համար: Ան նաեւ նշեց հետեւեալ անմիջական լուծուածները.

- 1.- Ամէնէն արագ միջոցով փոխարինել ընկերութեան փնտրող քիմիական նիւթերը
- 2.- Թեթեւցնել ընկերութեան մէջ շտաբայուծուող նիւթերը
- 3.- Ունայողութեամբ գործածել բնական ուժերը (վառելանիւթ, ջուր, ելեկտրականութիւն եւ այլն...)
- 4.- Սերունդները փոքր տարիքին դաստիարակել ընկերութեան պահպանման անհրաժեշտութեան գիտակցութեամբ
- 5.- Զգուշ վարուել եւ գոլորտային ընկերութեան բարեկեցութեան անտառները չարհիւ, ծաղիկներուն հոգ տանել եւ այլն...):

